ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 9

ք. Մարալիկ 03 փետրվարի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով □Համայնքային ծառայության մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006 թվականի □համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին□ թիվ 13-Ն հրամանով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետի և առաջատար մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը նշանակել 2012 թվականի մարտի 23-ին ժամը 12 ^{00}–ին՝ համայնքի քաղաքապետարանի շենքում:
2. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակել մամուլի և զանգվածային տեղեկատվության այլ միջոցներով:
3. Թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքները իրականացնել համայնքի ղեկավարի աշխատակազմի միջոցով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.